«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ

Ամսաթիվ՝	**27.10.2026թ.**
Ֆուտբոլային ակումբ՝	**«Գանձասար ՖԱ» ՀԿ**
Առաջնություն՝	**ՀՊԼ (2026-2027)**
Խաղ՝	**«Գանձասար» - «Սարդարապատ ՖԱ», 16.10.2026թ.**
Վարույթ՝	**ՊԼ-059**

Հարգելի՛ գործընկեր,

Կից ներկայացված է ՊԼ-059 վարույթի շուրջ ՀՖՖ Կարգապահական եւ էթիկայի կոմիտեի կողմից 2026 թվականի հոկտեմբերի 27-ին տեղի ունեցած նիստի արդյունքում կայացված որոշումը։

Խնդրում ենք որոշումն ընդունել ի գիտություն եւ ապահովել վերջինիս կատարումը՝ ՀՖՖ Կարգապահական եւ էթիկայի կանոնակարգով (2026թ. խմբագրություն) սահմանված կարգով։

Հարգանքով՝

ՀՖՖ Կարգապահական գրասենյակ

Գրասենյակի ղեկավար՝ Գայանե Զաքարյան

Հասցեատեր՝

«Գանձասար ՖԱ» ՀԿ

Էլեկտրոնային փոստի հասցե՝ info@fcgandzasar.am

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության

Կարգապահական եւ էթիկայի կոմիտեի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27.10.2026թ.

Նախագահ	Կարեն Հովհաննիսյան
Անդամեր	Դավիթ Բակլաչյան
	Արփի Լազարյան

Վարույթ՝	ՊԼ-059
Խախտում՝	«Գանձասար» թիմի ֆուտբոլիստ Ավգուստո Ժուլիո Դաբոյի (63141) կողմից գնդակի համար պայքարում շատ կոպիտ խախտում կատարելը / Հավելված 1 Բ, 14-րդ կետ
Առաջնություն՝	ՀՊԼ (2026-2027)
Խաղ՝	«Գանձասար» - «Սարդարապատ ՖԱ », 16.10.2026թ.

ՀՖՖ Կարգապահական եւ էթիկայի կոմիտեն որոշեց՝

Հիմք ընդունելով Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2026 թվականի խմբագրություն) 20-րդ հոդվածի 4-րդ կետը՝ «Գանձասար ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի երեսունապատիկի՝ 30,000 ՀՀ դրամի չափով:

Հիմք ընդունելով Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2026 թվականի խմբագրություն) 20-րդ հոդվածի 4-րդ կետը՝ «Գանձասար» թիմի ֆուտբոլիստ Ավգուստո Ժուլիո Դաբոյին (63141) որակազրկել 2 (երկու) խաղով: Սահմանված կարգապահական պատասխանատվության միջոցի մի մասը՝ 1 (մեկ) խաղը, պայմանականորեն չկիրառել: «Գանձասար» թիմի ֆուտբոլիստ Ավգուստո Ժուլիո Դաբոյի (63141) նկատմամբ փորձաշրջան սահմանել 2 (երկու) ամիս ժամկետով՝ մինչև 2026 թվականի դեկտեմբերի 16-ը ներառյալ:

ՀՖՖ Կարգապահական եւ էթիկայի կոմիտեի նախագահ՝

Կարեն Հովհաննիսյան

Ծանուցում

- ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման համար որոշմամբ պատասխանատվության միջոցի ենթարկված ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնի Կարգապահական գրասենյակ (disciplinary@ffa.am էլեկտրոնային հասցեով)՝ ի գիտություն Բողոքարկման կոմիտեին, համապատասխան որոշման մասին ծանուցվելուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում
- Որոշմամբ հիմքերի տրամադրման համար համապատասխան Ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման հայտարարություն ներկայացնելու հետ միասին ներկայացնի որոշման հիմքերը պատվիրելու համար նախատեսված 50,000 ՀՀ դրամի չափով տուրքի վճարումը հավաստող ապացույց: Նշված վճարը վերադարձման ենթակա չէ:
- Բողոքարկման հայտարարությունը ներկայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում (այն դեպքում, երբ Ֆուտբոլային սուբյեկտը դիմել է որոշման հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 5-օրյա ժամկետը սկսում է հաշվարկվել այդ հիմքերը ստանալու պահից) Ֆուտբոլային սուբյեկտը նույն կարգով պետք է ներկայացնի հիմնավորված բողոքը, ինչպես նաև բողոքի ներկայացման համար նախատեսված համապատասխան տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցը: Բողոքարկման վճարը կազմում է 100,000 ՀՀ դրամ և ենթակա է վերադարձման յուրաքանչյուր դեպքում ԲԿ որոշմամբ սահմանված չափով՝ ըստ բավարարված պահանջների համամասնության:
- Նշված ժամկետներում բողոքարկման գրավոր հայտարարություն չներկայացնելը հանգեցնում է որոշման վերջնական և պարտադիր դառնալուն, և համարվում է, որ կողմը հրաժարվել է բողոք ներկայացնելու իր իրավունքից: